

## ՀԱՅԱՍՏԱՆ

30 հուլիսի, 2012թ.

### Ամփոփիչ ակնարկ

Կրոնական ազատությունը պաշտպանված է Սահմանադրությամբ և գործնականում կառավարությունն, ընդհանուր առմամբ, հարգել է կրոնական ազատությունը: Որոշ օրենքներ և հայեցակարգեր սահմանափակում են կրոնական խմբերի անդամների կրոնական ազատությունը, սակայն, ընդհանուր առմամբ, կառավարությունը չի կիրառել այս իրավական սահմանափակումները: Կառավարությունը կրոնական ազատության իրավունքը հարգելու կամ պաշտպանելու ուղղությամբ բարելավման, կամ վատթարացման միտում չի դրսևորել:

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և գործունեության հիման վրա հասարակական չարաշահումների և խտրականության վերաբերյալ: Բազմաթիվ լրատվամիջոցներ ցուցաբերել են կողմնակալ վերաբերմունք կրոնական փոքրամասնությունների դեմ, իսկ որոշ լրատվամիջոցներ քննադատել են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

Ա.Մ.Ն. Դեսպանության պաշտոնյաները սերտ կապեր են պահպանել մեծամասնական ու փոքրամասնական կրոնական առաջնորդների հետ և խրախուսել են կրոնական ազատությունը հրապարակավ և պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում:

### Մաս I. Կրոնական ժողովրդագրությունը

Քաղաքացիների մոտավորապես 90 տոկոսը հարում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որն արևելյան վեց ուղղափառ եկեղեցիներից մեկն է: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր կենտրոնը մայրաքաղաք Երևանին մոտ գտնվող Էջմիածնի Մայր Տաճարը և վանքն է:

Կան այլ կրոնական խմբերի փոքր համայնքներ, որոնցից յուրաքանչյուրը կազմում են բնակչության հինգ տոկոսից պակաս մասը, և ներառում են՝ կաթոլիկներ՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայկական Միաբարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, հայ ավետարանական եկեղեցու անդամ քրիստոնյաներ, մոլդկաններ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաների տարբեր խմբեր, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու անդամներ (մորմոններ), եզդիներ (եզդիզմ դավանող ոչ մահմեդական քրդեր), հրեաներ, սունի մահմեդական քրդեր, շիա մահմեդականներ, հեթանոսներ և այլոք:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում, մինչդեռ հրեաները, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը՝ հիմնականում շիա մահմեդականներ՝ ներառյալ իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

## **Մաս II. Կրոնական ազատության հանդեպ հարգանք կառավարության կողմից**

### ***Իրավական/հայեցակարգային դաշտ***

Սահմանադրությունը պաշտպանում է կրոնական ազատությունը, սակայն այլ օրենքներում և հայեցակարգերում կան որոշ սահմանափակումներ կրոնական խմբերի անդամների կրոնական ազատության նկատմամբ:

Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքը հասարակական կազմակերպությունների գրանցման բացահայտ պահանջ չի դնում, սակայն միայն գրանցված կազմակերպություններն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Չգրանցված խմբերը չեն կարող հրատարակել 1000-ից ավել տպաքանակով թերթեր ու ամսագրեր, վարձակալել տարածք ժողովների համար, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել իրենց այցելուների համար վիզաների ստացումը, չնայած անդամները դա կարող են անել որպես անհատ: Գրանցման պայմաններին բավարարելու համար կրոնական կազմակերպությունները պետք է «զերծ լինեն նյութապաշտությունից և ուղղված լինեն դեպի զուտ հոգևոր ոլորտներն», ունենան առնվազն 200 հոգի չափահաս անդամներ և առաջնորդվեն «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» ուսմունքով: Գրանցման պահանջները չեն վերաբերում ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններին, չնայած շատերը նախընտրել են գրանցվել: Կրոնական կազմակերպությունների գրանցումն իրականացվում է Պետական ռեգիստրում: Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունը հետևում է կրոնական հարցերին և կատարում է փորձագիտական դեր գրանցման գործընթացում:

Սահմանադրությունը և Խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին օրենքը սահմանում են եկեղեցու և պետության տարանջատումը, սակայն ճանաչում են «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»:

Օրենքը որոշակի արտոնություններ է շնորհում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որոնք չեն գործում մյուս կրոնական խմբերի համար: Օրինակ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն թույլատրվում է ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, գործամասերում, և ազատագրկման վայրերում, մինչդեռ մյուս կրոնական կազմակերպությունները կարող են

ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում: Ընդհանուր առմամբ, օրենքը պաշտոնապես ճանաչում է այն պատմական դերը, որն ունի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հասարակության համար, քանզի քաղաքացիների մեծ մասը եկեղեցին համարում են ազգային ինքնության և մշակութային ժառանգության անբաժանելի մաս:

Օրենքն արգելում է «հոգեորսությունը», սակայն չի սահմանում «հոգեորսություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը: Արգելքը վերաբերում է բոլոր խմբերին, այդ թվում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն: Գրանցված կրոնական կազմակերպությունների մեծ մասը չի հայտնել տարվա ընթացքում իրենց գործունեության ընթացքում ի հայտ եկած որևէ զգալի իրավական խոչընդոտների մասին:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Հանրակրթական դպրոցներում կարող են դասավանդել միայն կառավարության կողմից արտոնված և վերապատրաստում անցած մասնագետները: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմությունը ներառված է հանրակրթական առարկայացանկում և դասավանդվում է հանրակրթական դպրոցի ուսուցիչների կողմից: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, ինչպես նաև այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կարող է նաև առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել: Բոլոր կրոնական կազմակերպություններն իրենց հետևորդների ուսուցման համար կարող են կրոնի դասավանդման խմբեր ստեղծել՝ այդ նպատակի համար օգտագործելով իրենց պատկանող կամ հատկացված շինությունները: Օրենքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն իրավունք է շնորհում կազմակերպել կրոնի ուսուցման կամավոր դասընթացներ պետական կրթական հաստատություններում՝ այդ նպատակի համար օգտագործելով այդ հաստատությունների շինություններն ու ռեսուրսները:

Օրենքը թույլ է տալիս խղճի նկատառումներով զինվորական ծառայությունից խուսափող անձանց, պետական թույլտվությամբ, մարտական զինվորական ծառայության փոխարեն անցնել ոչ-մարտական զինվորական կամ աշխատանքային ծառայություն: Օրենքը նաև քրեականացնում է այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը: Այնուհանդերձ, խղճի նկատառումներով զինվորական ծառայությանը դեմ անձանցից շատերն անընդունելի են համարում զինվորական հսկողության ներքո ընթացող այլընտրանքային աշխատանքային ծառայությունը:

Քրեական օրենսդրությամբ արգելվում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության սերմանումը:

Չնայած օրենսդրությամբ արգելվում է արտերկրում հոգևոր կենտրոններ ունեցող եկեղեցիների ֆինանսավորումը արտերկրից՝ կառավարությունը չի կիրառել այս արգելքը:

Կառավարության կողմից որպես ազգային տոն նշվում է հունվարի 6-ը, այն օրը, երբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնում է Սուրբ Ծնունդը: Տարվա ընթացքում կառավարության որոշմամբ հինգ եկեղեցական տոների հետ կապված երկուշաբթի օրերը պաշտոնապես հայտարարվում են ոչ աշխատանքային, քանի որ այդ օրերին ընդունված է այցելել հարազատների գերեզմանները: Դրա փոխարեն նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը հայտարարվում է աշխատանքային օր:

### ***Կառավարության գործունեությունը***

Եղել են հաղորդումներ երկրում կրոնական ազատության չարաշահումների, այդ թվում կրոնական բանտարկյալների ու կալանավորների մասին:

Ըստ Եհովայի վկաների՝ տարվա ընթացքում զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար դատապարտվել են Եհովայի 13 վկաներ, որոնցից 8-ը դատապարտվել են ազատազրկման 30 ամիս ժամկետով, 4-ը՝ 24 ամիս ժամկետով և 1-ը՝ 36 ամիս ժամկետով:

Եհովայի վկաների հաղորդմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ խղճի նկատառումներով զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայությունից հրաժարված Եհովայի վկաների 58 անդամներ գտնվում էին բանտում: Եհովայի վկաների ներկայացուցիչները հայտնում էին, որ ազատազրկված անձինք հրաժարվել են զինվորական ծառայության այլընտրանքից, քանի որ դեմ են այլընտրանքային ծառայության նկատմամբ զինվորական հսկողությանը:

Նոյեմբերի 11-ին Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը վեց ամսվա ազատազրկման դատապարտեց Եհովայի վկա Անդրանիկ Մակվեցյանին: Ի սկզբանե Մակվեցյանին առաջադրված են եղել ծեծի, սպառնալիքի և ինքնիրավչության մեղադրանքներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քահանա Արտակ Արթենյանի հետ վիճաբանության միջադեպի կապակցությամբ: Այս մեղադրանքներով դատարանը Մակվեցյանին արդարացեց, սակայն դատապարտեց նրան եկեղեցու մերձակայքում Արթենյանի «քարոզչության իրավունքը» խախտելու և նրա՝ Մակվեցյանի կողմից հոգեորություն կատարելը «կանխելու իրավունքը» ոտնահարելու համար: Մայիսի 15-ին Արթենյանը՝ իր ծառայած Սուրբ Երրորդություն եկեղեցու մոտակա հանրային քայլուղիներից մեկում տեսնելով Մակվեցյանին Աստվածաշունչը քննարկելիս, մոտեցել և ագրեսիվորեն՝ խոսքերով հարձակվել նրա վրա: Արթենյանը պնդում էր, թե Մակվեցյանը մեկ անգամ հարվածել էր իրեն, սպառնացել, ապա մի պահ խլել նրա բջջային հեռախոսը: Դատախազը հրաժարվեց քրեական գործ հարուցել Արթենյանի պահվածքի հետ կապված և մեղադրանքներ ներկայացրեց միայն Մակվեցյանի նկատմամբ: Դատարանին ուղղված Արթենյանի եզրափակիչ խոսքում ասվում էր, որ էականը դա միլիոնավոր հայերի ակնկալիքն է, որ դատարանն ամրագրի Եհովայի վկաների «հակահասարակական, հակապետական, հակազգային և ... հակաժողովրդավարական» գործունեությունը երկրում:

Դեկտեմբերի 23-ին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) և իր անդամ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ կազմակերպությունը

հրապարակեցին մի հայտարարություն, որով դատապարտում էին Անդրանիկ Մակվեցյանի ազատագրվումը և կոչ էին անում Հայաստանի իշխանություններին ազատ արձակել նրան, ապահովել կրոնական կազմակերպությունների ազատ քարոզչության իրավունքը, չեզոքություն ցուցաբերել կրոնական հարցերում և խթանել հանդուրժողականությունը հասարակությունում:

Դեկտեմբերի 28-ին Քաղաքացիական հասարակության ինստիտուտն անկախ փորձագիտական վերլուծություն (*amicus curiae*) ներկայացրեց վերաքննիչ դատարան: Փորձագիտական վերլուծությամբ եզրակացվում էր, որ դատապարտումը Մակվեցյանի անձնական համոզմունքներն արտահայտելու իրավունքին ուղղված անարդարացի միջամտություն էր և ոտնահարում էր նրա կրոնական ազատության իրավունքը: Տարեվերջի դրությամբ Մակվեցյանը դեռ բանտում էր և սպասում էր իր վերաքննիչ բողոքի հետագա ընթացքին:

Հուլիսի 13-ին ընդհանուր իրավասության դատարանը Հոգեգալստական եկեղեցու հովիվ Վլադիմիր Գասպարյանին մեղավոր ճանաչեց լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու մեջ և սահմանեց տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի (520 ԱՄՆ դոլարի) չափով: Նոյեմբերի 10-ին մասնավոր իշխանամետ «Շանթ» հեռուստաընկերության երկու լրագրողներ առանց թույլտվության մտել էին մասնավոր սեփականություն հանդիսացող տարածք, որտեղ Հոգեգալստական եկեղեցին անցկացնում էր իր հավաքները: Լրագրողները սկսել էին նկարահանումներ կատարել շենքի ներսում և հրաժարվել էին կատարել նկարահանումները դադարեցնելու ու հեռանալու վերաբերյալ Բաղդասարյանի պահանջները: Ըստ Բաղդասարյանի լրագրողները վիրավորանքներ են հասցրել ներկաներին, և լքել միայն այն ժամանակ, երբ ինքը ոստիկանություն է կանչել: Լրագրողները պնդում էին, որ Բաղդասարյանը դիմել է բռնության և խոչընդոտել է իրենց մասնագիտական գործունեությանը, մինչդեռ Բաղդասարյանի պնդմամբ ինքը միայն ձեռքով ծածկել է տեսախցիկը և արմունկից բռնելով ուզեցել է դեպի դուռն ուղեկցել լրագրողներից մեկին:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տեղական դիտորդները և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները հաղորդել են, որ դպրոցներում բացի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց այլ կրոնական խմբերում ներգրավված աշակերտների հանդեպ շարունակվել է ակնհայտ լինել բացասական վերաբերմունք, սակայն ավելի մեղմ, համեմատած նախորդ տարիների հետ: Այս վերաբերմունքն առավել ակնհայտ է եղել Հայ Եկեղեցու պատմության դասերին, որոնք ըստ հաղորդումների պարունակել են կրոնական ուսուցման տարրեր:

Տարվա ընթացքում մի շարք պետական պաշտոնյաներ երկրի կրոնական փոքրամասնությունների դեմ ուղղված հայտարարություններ են արել: Ըստ տեղական դիտորդների քաղաքական գործիչները, ինչպես նաև լրատվամիջոցները, 2012թ. խորհրդարանական ընտրություններին նախընթաց շահարկել են այս հարցը իրենց քաղաքական նպատակների համար:

Հոկտեմբերի 28-ին իշխանական Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցության նախագահ Գալուստ Սահակյանն ասաց, որ աղանդներն ավելի վտանգավոր են, քան Ադրբեջանական պատերազմի սպառնալիքները և կոչ արեց հզորացնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Մայիսի 10-ին, մեկ այլ պատգամավոր՝ Հովհաննես Սահակյանն ասաց, որ Եհովայի վկաները «ոչ միայն բիզնեսի են վերածել «Աստծո խոսքը», այլև ուղղակի քայքայիչ քաղաքականություն են վարում ընդդեմ Հայաստանի»: Մարտի 23-ին իշխանական կուսակցության երիտասարդական թևի ղեկավար Կարեն Ավագյանը «Ոչ աղանդներին» կլոր սեղան քննարկման ժամանակ ասաց, որ երիտասարդությունը պետք է լինի եկեղեցու կողքին և պայքարի «աղանդների» չարիքի դեմ: Հունվարի 21-ին հարցազրույցի ընթացքում մեկ այլ պատգամավոր՝ Մկրտիչ Մինասյանը, Եհովայի վկաներին անվանեց չարիք և կարծիք հայտնեց, որ նրանց գործունեությունը պետք է արգելվի:

Սեպտեմբերի 29-ին Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը հայտարարեց քայքայիչ ամբողջատիրական աղանդների դեմ պայքարի ռազմավարություն մշակելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին: Նա նշեց, որ «աղանդները» ազգային անվտանգության առավել նշանակալի սպառնալիքներից մեկն են:

Օգոստոսի 3-ին անցկացված մի հարցազրույցի ժամանակ Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերի վարչության պետ Վարդան Ասցատրյանը խոսեց «աղանդների» վտանգավորության մասին: Նա ասաց, որ Եհովայի վկաների կողմից ակտիվ քարոզչությունը փողոցներում անընդունելի է, և դա պետք է սահմանափակվի ու իրականացվի միայն նրանց հատկացված հատուկ վայրերում:

Տարբեր փոքրամասնական կրոնական խմբերի կողմից եղել են հաղորդումներ, որ իրենք հավաքների համար չեն կարողացել մասնավոր անձանցից վարձակալել մեծ դահլիճներ: Այս տարածքների սեփականատերերը կամ հրաժարվել են տարածք տրամադրել, կամ էլ չեղյալ են համարել նախնական պայմանավորվածությունները՝ ենթադրաբար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կամ իրավապահ կառույցների ներկայացուցիչների կողմից «աղանդների» խնդրանքները մերժելուն ուղղված ճնշումներից հետո:

Օրինակ՝ Եհովայի վկաները հայտնում են, որ Վանաձորում իրենց հավաքից մի քանի ժամ առաջ վարձակալված դահլիճի սեփականատերը հրաժարվեց պայմանագրի կատարումից: Հունիսի 10-12-ը նախատեսված այդ եռօրյա հավաքին մասնակցելու էին թվով 600 Եհովայի վկաներ և երբ նրանք եկան, տեսան, որ դահլիճի դռները փակ են: Ըստ Եհովայի վկաների սեփականատերը հայտնել էր, թե հեռախոսազանգ է ստացել, որով ինչ-որ մեկը սպառնացել է պայթեցնել շինությունը, եթե այն տրամադրվի Եհովայի վկաներին, և որ նա թույլ կտա հավաքի անցկացումը, միայն իշխանությունների հավանությունը ստանալուց հետո: Ըստ խմբի՝ մարզպետը հաստատել էր, որ նա զանգահարել է դահլիճի տարածքի սեփականատիրոջը հունիսի 9-ին և ասել, որ վերջինս Եհովայի վկաներին տարածք վարձակալելու « հետևանքները հաշվի առնի»: Մարզպետն ասել էր, որ իր խոսքերը ոչ թե

սպառնալիք են եղել, այլ նախագգուշացում, որ այդ տարածքում Եհովայի վկաների դեմ հնարավոր էր բռնություններ սկսեին: Ըստ խմբի՝ մարզպետը հունիսի 10-ի երեկոյան համաձայնել է տեղյակ պահել սեփականատիրոջը, որ մարզպետարանը հավաքն այնտեղ անցկացնելու վերաբերյալ առարկություններ չունի: Այնուհանդերձ, սեփականատերը նախընտրեց տարածքը Եհովայի վկաներին հավաքի համար չտրամադրել:

### **Մաս III. Հասարակության հարգանքը կրոնական ազատության իրավունքի նկատմամբ**

Եղել են հաղորդումներ կրոնական պատկանելության, հավատքի և դավանանքի հիման վրա հասարակական չարաշահումների վերաբերյալ: Հասարակությունն, ընդհանուր առմամբ, բացասական է տրամադրված փոքրամասնական կրոնական խմբերի նկատմամբ: Այս վերաբերմունքը հաճախ չի անդրադառնում անձնական կամ դրացիական հարաբերությունների վրա, բայց այն արտացոլում է ընդհանուր ընկալումն առ այն, թե փոքրամասնական կրոնական խմբերը սպառնալիք են հանդիսանում պետականության համար, զգացում, որն ամրապնդվում է նաև լրատվամիջոցների կողմից: Փոքրամասնական կրոնական խմբերի անդամները խտրական վերաբերմունքի և անհանդուրժողականության են ենթարկվել հասարակության կողմից, այդ թվում նաև աշխատավայրերում:

Շատ լրատվամիջոցներ, այդ թվում՝ հանրային հեռուստաընկերությունը շարունակել են ակտիվ քարոզչություն իրականացնող փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել որպես «աղանդներ»: Տարբեր հեռուստաընկերություններ եթերում շարունակել են ներկայացնել քննարկումներ, լրատվական թողարկումներ և «հատուկ թողարկումներ», որոնց մասնակիցները փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել են որպես պետության թշնամիներ: Լրատվամիջոցները, մասնավորապես տպագիր լրատվամիջոցները և դրանց առցանց տարբերակները հրապարակել են ոչ ճշգրիտ հոդվածներ, որտեղ կրոնական փոքրամասնություններին ներկայացրել են որպես հանցագործներ և լրտեսներ: Որոշ լրագրողներ արժարծել են «աղանդավորական ահաբեկչությունը»: Որոշ հոդվածներ անուղղակիորեն թողություն են տվել «աղանդների» անդամների հանդեպ բռնություններին: Որոշ լրատվամիջոցներ նաև քննադատական հոդվածներ են տպագրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերաբերյալ:

Ապրիլին Երևանի գրողների միությունը «Կյանքի խոսք» եկեղեցու ավագ հովիվ Արթուր Միմոնյանին պարզևատրեց «Լավագույն հեղինակ» մրցանակով: Մրցանակը տեղիք տվեց «Կյանքի խոսք» եկեղեցու մասին բազմաթիվ բացասական հրապարակումների, իսկ գրողների միությանը դատապարտում էին «աղանդավորին» մեծարելու համար: Օրինակ՝ ապրիլի 29-ին առցանց լրատվական գործակալություններից մեկը հրապարակեց մի հարցազրույց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քահանայի հետ, որտեղ վերջինս դատապարտում էր մրցանակի շնորհումը՝ ասելով որ Գրողների միությունը չպետք է մեծարեր մի մարդու, որ իր քարոզչությամբ քառս է ստեղծում:

Մարտի 10-ի 168 ժամ թերթը գրեց, որ ավելանում են հաղորդումները, որտեղ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին քննադատվում է օլիգարխների հետ սերտ կապեր

ունենալու համար: Թերթը մասնավորապես նշում էր «Բենթլի» մակնիշի թանկարժեք ավտոմեքենայի ձեռքբերումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու արքեպիսկոպոս Նավասարդ Կճոյանի կողմից, որը մեծ հնչեղություն էր ստացել և խիստ քննադատությունների տեղիք տվել:

Հոկտեմբերի 15-ին փոքր, սակայն լավ կազմակերպված մի խումբ, Հայաստանում վտանգավոր աղանդների ազդեցության դեմ բողոքի ակցիայի էր դուրս եկել: Ցուցարարները վանկարկում էին «ոչ հոգեորսությանը», «ես առաքելական եմ» և թռուցիկներ էին բաժանում, որի մի կողմում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն սատարող ուղերձներ էին, իսկ մյուս կողմում «վտանգավոր աղանդների» ցուցակ էր: Աղանդների ցուցակում ի թիվս այլոց ներառված էին Բապտիստները, մորմոնները, Եհովայի վկաները, «Կյանքի խոսքը» և հերբալայֆը: Բողոքարարները միջնորդություն ներկայացրեցին կառավարությանը օրենսդրություն ընդունելու վերաբերյալ, որը հստակ կսահմաներ և կքրեականացներ «հոգեորսությունը»:

Եհովայի վկաների հաղորդմամբ տարվա ընթացքում առնվազն ինը դեպք է գրանցվել, երբ գյուղական բնակավայրերում բնակիչները ագրեսիվորեն՝ խոսքերով հարձակվել, սպառնացել և դուրս են հրավիրել իրենց անդամներին: Դեպքերից մեկի ժամանակ, հոկտեմբերի 9-ին, Ղազանչի գյուղում, մոտ տասը երեխա հետևել են մի խումբ Եհովայի վկաների և քարեր նետել նրանց վրա: Եկել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեղի քահանան՝ դպրոցի եկեղեցու պատմության ուսուցչի ուղեկցությամբ: Քահանան ասել է, որ միայն ինքը կարող է թույլատրել քարոզչություն գյուղում: Քահանան պատռել է Եհովայի վկաների գրքույկները:

#### **Մաս IV. ԱՄՆ կառավարության հայեցակարգը**

Ա.Մ.Ն. Դեսպանության պաշտոնյաները սերտ կապեր են պահպանել մեծամասնական ու փոքրամասնական կրոնական առաջնորդների հետ և խրախուսել են կրոնական ազատությունը հասարակայնության հետ շփումներում և պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում:

Բացի այդ Ա.Մ.Ն. Դեսպանության պաշտոնյաները՝ այլ միջազգային կազմակերպությունների անդամների հետ միասին, շարունակել են խրախուսել կառավարությանը ընդունել միջազգային ստանդարտներին համապատասխանող այլընտրանքային ծառայության մասին նոր օրենք խղճի նկատառումներով զինվորական ծառայությունից խուսափողների համար: